ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է

Կառավարման խորհրդի

20__թ. _____-ի նիստում

Խորհրդի նախագահ՝

Լիլիթ Շահնազարյան

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1

ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028ԹԹ

Երևան 2022

Պաշտոնական անվանումը՝

«ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ »

պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ **01008611**

Հասցե՝ **ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 3/1**

Հեռ.՝ **+374 10285782**

Էլեկտրոնային փոստի հասցե՝ **yerevancollege@gmail.com**

Կայք՝ **www.yerevancollege.am**

Բանկային տվյալներ.

Բանկի անվանումը՝ **Թիվ 1 գանձապետարան**

Հաշվի համարը՝ **900018002338**

Տնօրեն՝ **Պարույր Սանթրոսյան**

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԸ

Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջը (այսուհետ՝Քոլեջ) որպես արհեստագործական ուսումնարան հիմնադրվել է 1961 թվականին:2007 թվականին նախկին Էլեկտրատեխնիկական քոլեջի և նախկին թիվ 2 արհեստագործական ուսումնարանի միաձուլման արդյունքում անվանակոչվել ներկայիս անվանումով:

2007 թվականին ՀՀ Վարչապետի որոշումով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ Քոլեջը մրցութային կարգով ընդգրկվել է Եվրոպական Միության բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված 12 բազմագործառութային քոլեջների ցանկում:

Հիմնադրման օրվանից Քոլեջի գործունեությունն ուղղված է եղել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովմանը:

Գլուխ 1

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1. Լինելով ազգային կրթական համակարգի մի մասնիկ, անհատի մտավոր, քաղաքացիական ու բարոյական որակների ձևավորմանը նպաստող ուսումնական հաստատություն, Քոլեջի հիմնական առաքելությունն է՝ գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային և համամարդկային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները պետության շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

2. Քոլեջը, ինչպես և Հայաստանի շատ քոլեջներ, գտնվում է մեծ մարտահրավերների և փոփոխությունների ժամանակաշրջանում, որոնք պայմանավորված են աշխարհաքաղաքական, հետպատերազմյան, ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական և մշակութային բազմազան գործոններով: Քոլեջը չի կարող դիմագրավել այս մարտահրավերներին՝ առանց վերագնահատելու և վերանայելու իր դերը և պատասխանատվությունը, առանց մեծացնելու և փոփոխություններին հարմարեցնելու իր ինստիտուցիոնալ կարողությունը:

3. Ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից՝ Քոլեջը խթանում է իր ուսանողների և դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը և նպաստում հանրության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի բարեկեցության բարձրացմանը:

4. Քոլեջը մշտապես ձգտում է գերազանցության և նորարարության ուսուցման հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում: Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ Քոլեջն ապահովում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիությունը, ուսումնական գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև մատչելիությունն և հավասարությունը:

5. Կարևորելով և գիտակցելով նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումների դերն ու նշանակությունը՝ Քոլեջն առաքելություն ունի նաև հասարակության մեջ ձևավորել գիտելիքի, մասնագետի և կրթության մասին այն արժեքների և ընկալումների համակարգը, որն անհրաժեշտորեն պետք է ուղղված լինի

մեր քաղաքացու, հասարակության և պետության զարգացմանը և հզորացմանը:

6. Քոլեջն իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելություն, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը:
7. Կրթական ծրագրերի առավել արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ քոլեջի ուսանողների համար ստեղծում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ:
8. Նաև իրականացնում է մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր:
9. Ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը:
10. Աջակցում է քոլեջի ուսանողական խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև ուսանողների մասնակցությանը քոլեջի կառավարմանը և իրականացվող ծրագրերում.

Գլուխ 2

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ուրվագծել միջին մասնագիտական ոլորտի մասին նոր պատկերացումներ, ճշտել այն խնդիրների ցանկը, որոնք պետք է պատրաստ լինի լուծել քոլեջը՝ ժամանակակից աշխարհին համապատասխանող

գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելու համար: Միևնույն ժամանակ, պահպանելով և ամրապնդելով իր կայուն տեղը ՀՀ միջին մասնագիտական կրթության համակարգում, ինտեգրվել և փորձել դառնալ միջազգային կրթական համակարգի ակտիվ անդամներից մեկը:

Քոլեջն իրականացնում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն, որի արդյունքում շրջանավարտները որակավորվում են որպես արհեստավորներ և կրտսեր մասնագետներ:

Քոլեջում դասավանդվող մասնագիտությունները.

N	**մասնագիտությունը**	**մասնագիտացումը**	**կրթության հիմքը**	**կրթության ձևը**	**ուս. տարի**
Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության մասնագիտություններ					
1.	Խոհարարական գործ	խոհարար	հիմն.ընդհանուր	առկա	3
	Խոհարարական գործ	խոհարար	միջն.ընդհանուր	առկա	1
2.	Ոսկերչություն	ոսկերիչ	հիմն.ընդհանուր	առկա	3
	Ոսկերչություն	ոսկերիչ	միջն.ընդհանուր	առկա	1
3.	Հաշվապահական	հաշվապահ	հիմն.ընդհանու	առկա	3

	հաշվառում		ր		
4.	Շուկայաբանություն	շուկայաբան	հիմն.ընդհանուր	առկա	3
5.	Դերասանական արվեստ	դերասան	հիմն.ընդհանուր	առկա	4
6.	Ռեժիսուրա	ռեժիսոր	հիմն.ընդհանուր	առկա	4
7.	Պարի ուսուցում	պարուսույց	հիմն.ընդհ.	առկա	4

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ 5 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(սեպտեմբերի 1-ի դրությամբ)

		Ուսանողների թիվը				
		2018	**2019**	**2020**	**2021**	**2022**
Նախնական մասնագիտական կրթություն	Ընդամենը	179	168	179	166	161
Միջին մասնագիտական կրթություն	Ընդամենը	302	330	325	311	287
ԱՄԲՈՂՋԸ	**ԸՆԴԱՄԵՆԸ**	481	498	504	477	448

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

	Շրջանավարտների թիվը					
		2018	2019	2020	2021	2022
Նախնական մասնագիտական կրթություն	Ընդամենը	42	65	51	49	57
Միջին մասնագիտական կրթություն	Ընդամենը	52	59	82	92	76
ԱՄԲՈՂՋԸ	**ԸՆԴԱՄԵՆԸ**	94	124	133	141	133

Ցավոք դիմորդների թվի նվազում է արձանագրվել Արցախյան 2-րդ պատերազմից հետո,ինչը թերևս պայմանավորված է արտագաղթով: Երևույթը արձանագրվել է հանրապետության բազմաթիվ հաստատություններում:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

(2022թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ)

	Ընդամենը	Այդ թվում՝					
		Դասավանդում է	Ունի գիտական աստիճան	Բաշխումն՝ ըստ տարիքի			
				մինչև 30	30-45	46-60	60-ից բարձ
Վարչական անձնակազմ	25	10		1	10	7	
այդ թվում՝ կանայք	*16*	*9*					
Դասավանդողներ	40			10	14	9	7
այդ թվում՝ կանայք	31						
Օժանդակ (տեխնիկական) անձնակազմ	5					5	
այդ թվում՝ կանայք	5						
Ընդամենը	**70**						
այդ թվում՝ կանայք	**52**						

Ուժեղ կողմերը

Քոլեջը նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով կրթական ծառայություններ մատուցելու առումով միակը չէ համայնքում: Սակայն տարածաշրջանային կենտրոն լինելու հանգամանքը, ԵՄ կողմից իրականացված աջակցության ծրագիրը, պետական պատվերի տեղերի տարեկան քանակը, ուսման վարձի մատչելիությունը, զեղչերի ճկուն քաղաքականությունը հաստատության հնարավորությունները շուկայում դարձնում են մրցունակ:

- Քոլեջի նյութատեխնիկական բազան հագեցված է, առկա են ժամանակակից սարքավորումներ, ուսուցման տեխնիկական միջոցներ, կահավորված տարբեր առարկայական և համակարգչային կաբինետներ, խոհարարական, ոսկերչական, վարսահարդարման և դիմահարդարման, էլեկտրատեխնիկական արհեստանոցներ, 3 պարասրահ, ինտերակտիվ դասավանդման կաբինետ, հանդիսությունների դահլիճ՝ թատրոն:

- Քոլեջում մասնագիտական առարկաները դասավանդում են տվյալ ոլորտում գործնական աշխատանքի փորձ ունեցող և բազմիցս վերապատրաստված մասնագետներ,

- Ոլորտային մասնագիտությունների մասնագիտական մոդուլները համատեղությամբ դասավանդում են Երևանի պետական և ոչ պետական թատրոնների փորձառու և երիտասարդ դերասան-ռեժիսորներ, Թատրոնի և

Կինոյի պետական ինստիտուտի դասախոսներ, տարբեր պարային համույթների պարուհի-պարուսույցներ:

- Դերասանական արվեստ, ռեժիսուրա, պարի ուսուցում մասնագիտությունների ուսուցմանը և շահառուների շրջանում մասնագիտական կողմնորշման խթանմանը մեծ չափով նպաստում է քոլեջում գործող ուսանողական ,,Ուրիշ,, թատրոնը, որտեղ բեմադրվել են 30-ից ավելի թատերական և պարային ներկայացումներ:

Կահավորված լսարանն ու նկարահանող սարքավորումները թույլ են տվել ուսանողներին նկարահանել կարճամետրաժ ֆիլմեր, հոլովակներ, youtube

կայքում ունենալ մշտական գործող 1CollNews անվանումով լրատվական էջ, որտեղ նկարահանվում և տեղադրվում են ներքոլեջային իրադարձությունները, պատրաստվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված տեսանյութեր:



- Քոլեջում ուսուցումն իրականացվում է ուսանողակենտրոն, կարողություններին միտված ուսումնական պլաններով,
- Քոլեջն ապահովում է շարունակական կրթությունը ԲՈՒՀ-երում (կնքված են պայմանագրեր Կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի, Հայ-ռուսական սլավոնական, Ագրարային, Մանկավարժական, Ճարտարագիտական, Եվրասիա և այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ):

- Ձևավորված է տարիներ շարունակ գործող ու զարգացող սոցգործընկերություն այնպիսի ճանաչված կազմակերպությունների ու ձեռնարկությունների հետ, ինչպիսիք են՝ Էլ-Ֆոր ՍՊԸ, Հայր և որդի Երեմյաններ, Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա, Երկիր Մեդիա Հեռուստաընկերություն, Երևանի Պատանի հանդիսատեսի պետական թատրոն, Սոս Սարգսյանի անվան Համազգային պետական թատրոն, Լուսիլ Դանս թատրոն, Մարիոթթ-Արմենիա , Սմոքինգ Շեֆ ռեստորան, Մաչանենց տուն ռեստորան, Jellyfish Yerevan ռեստորան, Մեղեդի սրճարան, JanPho ռեստորան, Փարավոն ռեստորանային համալիր, Սանտաֆե սրճարան-ռեստորան, ՊԵՍՏՈ սրճարան, Տաշիր պիցցերիաների ցանց, Կարաս թոնրատների ցանց, Dragon Garden ռեստորան, Անի պլազա, AJA Հայ ոսկերիչների համաշխարհային ասոցիացիա, Երևանի ոսկերչական գործարան և բազմաթիվ այլ կազմակերպություններ:

- Արդյունավետ պրակտիկաների կազմակերպումը տարբեր կազմակերպություններում նպաստում են ուսանողների կարողությունների և հմտությունների կատարելագործմանն ու խորացմանը:

- Շահառուների այս լայն, սակայն ոչ ամբողջական շրջանակն ու ներգրավվածության քանակը վկայությունն է մատուցվող ծառայությունների որակի մասին: Դասավանդվող մասնագիտությունների գծով ուսանողների թվի աճը վերջին 15 տարիների ընթացքում (60 սովորողից 450) և կարճաժամկետ դասընթացները (1500-ից ավել մասնակիցներ) գնագոյացման այն մեխանիզմներն են, որոնց շնորհիվ հաստատության արտաբյուջետային միջոցները կազմում են քոլեջի ֆինանսական միջոցների գրեթե 20 %-ը: Քոլեջի կողմից իրականացվող կարճաժամկետ դասընթացները և ծառայությունները հետևյալն են՝

- Խոհարար
- Հրուշակագործ
- Սեղանի ձևավորող
- Վարսահարդար
- Դիմահարդար
- Մատնահարդար
- Էլեկտրիկ-տեխնիկ
- Ոսկերիչ

Թույլ կողմերը

1. - Քոլեջի թերևս ամենաթույլ կողմը Երևան քաղաքում նրա տեղակայման վայրն է:

   Գտնվելով Թբիլիսյան խճուղու վրա՝ քաղաքի կենտրոնից և այլ վարչական շրջաններից քոլեջ հասնելը ավելի բարդ պրոցես է ուսանողների համար, քան Աբովյան, Չարենցավան, Հրազդան քաղաքներից: Երբեմն շահառուները ընտրում են այլ ուսումնական հաստատություններ նշված հեռավորության և քաղաքային տրանսպորտի ընդամենը 2 -3 երթուղիների առկայության պատճառով:

2. - Ոլորտի, այդ թվում նաև քոլեջի դասախոսների և հաստիքային աշխատողների ցածր աշխատավարձը:

   Հաստիքային աշխատողների համար, պետության կողմից սահմանված է նվազագույն աշխատավարձ, նույնը վերաբերում է նաև դասախոսներին: Քոլեջի արտաբյուջետային միջոցներից վճարվող լրացուցիչ վարձատրության արդյունքում դասախոսի մեկ դրույք աշխատավարձը կազմում է 108 000 դրամ: Լրացուցիչ վարձատրություն են ստանում նաև վարչական պատասխանատու աշխատողների մեծ մասը, սակայն հարկ է նշել, որ այլ հանգամանքներում նշված գումարները կուղղորդվեին նյութատեխնիկական բազայի հզորացմանը, միջազգային կապերի հաստատմանը և փորձի փոխանակման նպատակով ուսանողների և

դասախոսների ճանաչողական այցերը արտերկրի ուսումնական հաստատություններ, որտեղից հրավերները քիչ չեն:

3. Քոլեջի աշխատակիցներին պետության կողմից տրամադրվող սոցիալական փաթեթի հատկացման բացակայությունը: Այս խնդիրը գլոբալ է և վերաբերվում է հանրապետության բոլոր միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին: Սրա առակայությունը թույլ կտար քոլեջի աշխատակիցներին օգտվել առողջապահական , հանգստի և փաթեթով նախատեսված այլ ծառայություններից:

4. - Վերջին 2 հանգամանքը երբեմն հանգեցնում են կադրերի արտահոսքի, այն դեպքում երբ նրանց վրա ներդրվել են ռեսուրսներ (վերապատրաստումներ, դասընթացներ, սեմինարներ):

5. - Շենքային պայմաններ:

Ունենալով կահավորված և ձևավորված լաբորատորիաներ և արհեստանոցներ՝ շենքի ճարտարապետությունը թույլ չի տալիս մեծացնել լսարանային ֆոնդը: Վերոհիշյալ հանգամանքով է պայմանավորված, որ մեկ հերթով դասավանդման պարագայում քոլեջի 2 մասնաշենքերի թողունակությունը միաժամանակ 500 ուսանող է: Թերևս խորհրդային տարիներից ,որպես ցուցադրական հաստատություն կառուցված լինելու հանգամանքով է պայմանավորված շենքի նման կառուցվածքը: Երկրորդ հերթով ուսուցման կազմակերպման փորձերը արդյունավետ չեն եղել:

6. - Որոշ մասնագիտությունների պարագայում թույլ կողմերից է (խոհարարություն, ոսկերչություն) արտադրական ուսուցման վարպետների թոշակառու լինելու հանգամանքը և աշխատանքից ազատվելու պարագայում համապատասխան որակավորմամբ կադրեր գտնելու դժվարությունը:

7. Թույլ կողմ է նաև Խոհարարական գործ մասնագիտության պարագայում գործնական պարապմունքների համար անհրաժեշտ մթերքի գնման ֆինանսավորման բացակայությունը: Մասնագիտությունը ծախսատար է, բայց մեկ ուսանողի համար պետական ֆինանսավորումը նույնն է , ինչ մյուս բոլոր մասնագիտությունների համար: Նման պայմաններում խնդրի լուծումը այլընտրանքային ֆինանսական միջոցներ հայթայթելու մեջ է, որը մեծ ջանքեր է պահանջում և դժվար իրականացվող է:

Գլուխ 3

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Տարածաշրջանային N 1 քոլեջը նպատակ ունի դառնալ բազմագործառութային համակարգի տարածման, զարգացման և իրականացման կենտրոն, պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր:

Քոլեջի նպատակներից է նաև դառնալ ուսանողական կենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքին և մասնագիտական կարիերային՝ գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան՝ նպաստելով կրթական ծառայությունների շուկայի ձևավորմանը և այդ շուկայում առաջարկվող ծառայությունների համապատասխանեցմանը ներկայումս արդեն իսկ ուրվագծվող ապագայի կենսական պահանջներին, դրանց բազմազանությունը թե՛ մատուցվող ծառայությունների բովանդակության և թե՛ ձևի (կաղապարային տեսանկյունից) առումով:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատության առանձնահատկությունը որոշվում է այն արժեքներով, որոնց հավատում և դրանցով առաջնորդվում են հաստատության և' դասախոսները, և' ուսանողները: Քոլեջի համար այդ արժեքները այն հիմնարար սկզբունքներն են, որոնք դրված են նրա գործունեության հիմքում:

- **Մատչելիություն**. Քոլեջը կարևորում և ապահովում է յուրաքանչյուր սովորողի մատչելի որակյալ մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը, կիրառում է խրախուսանքներ, անհրաժեշտության դեպքում՝ տրամադրում ֆինանսական աջակցություն ներքոլեջային կրթաթոշակների տեսքով:
- **Ուսանողի համակողմանի զարգացում.** հաշվի առնելով տեխնիկայի, մշակույթի, գիտության նորագույն ձեռքբերումները, և տնտեսության ու աշխատաշուկայի իրական պահանջները՝ ստեղծում է համապատասխան պայմաններ ոչ միայն մասնագիտական հմտությունների ձեռքբերման, այլև՝ դաստիարակչական, ֆիզիկական կուլտուրայի և գեղարվեստական ստեղծագործության աշխատանքներ իրականացնելու և բազմակողմանիորեն զարգանալու համար:
- **Մանկավարժադասախոսական որակյալ կազմ.** Քոլեջի արդյունավետ գործունեության հիմնական գրավականը նվիրված, մասնագիտական և մարդկային հատկանիշներով օժտված մանկավարժական կազմն է:
- **Ուսանողի մասնակցություն.** Պահպանել և զարգացնել աշխատակիցների և սովորողների ակտիվությունն ու նախաձեռնողականությունը, ապահովել նրանց մասնակցությունը Քոլեջի կառավարման գործընթացում: Նման մոտեցումը բարձրացնում է ուսանողների քաղաքացիական և հասարակական ն պատասխանատվության զգացումը, օգնում է ուսանողի ինքնագիտակցության կայացմանը:

- **Միջանձնային հարաբերություններ.** Ստեղծված վստահության միջավայրը, սովորողների և դասախոսների համախմբվածությունը Քոլեջի առօրյայի անբաժանելի մասն է: Հոգատար և ուշադիր վերաբերմունքը աշխատակիցների և սովորողների կարիքների նկատմամբ առկա իրողություն է:

Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի միջնաժամկետ նպատակները

2023-2025 թթ ընթացքում, որպես միջնաժամկետ նպատակներ, քոլեջը նախատեսում է ամրապնդել ու զարգացնել առկա հնարավորությունները կրթական ծրագրերի ուղղությամբ: Որպես նոր նախաձեռնություն՝ միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է եռակողմ և երկկողմ պայմանագրերի կնքում այլ հաստատությունների հետ՝ համատեղ մի շարք ծրագրերի իրականացման նպատակով՝

1.1.Ուսումնական գործընթացի կատարելագործմանը և խնդիրներին ուղղված միջքոլեջային համաժողովների, խոհրդակցությունների, ուսանողական մրցույթների, միջոցառումների անցկացում:

1.2.Հաստատությունների վարչական անձնակազմի և դասավանդողների փորձի փոխանակում և վերապատրաստում:

1.3.Ներքին որակի ապահովման ենթակառուցվածքների փորձի փոխանակում:

1.4.Կարիերայի կենտրոնների մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման փորձի փոխանակում:

1.5.Առկա նյութատեխնիկական բազաների համատեղ օգտագործում:

Գլուխ 4 և 6

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԹԻՐԱԽՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՓԱՍՏԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ,

Նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ճշտել այն ռազմավարական հիմնախնդիրների ցանկը, որոնք պետք է պատրաստ լինի լուծել Քոլեջը՝ ժամանակակից աշխարհին համապատասխանող գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելու համար, նախապատվություն տալով այնպիսի ռազմավարությունների, որոնք հնարավորություն են տալիս համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք:

Ըստ այդմ, մեր կողմից սահմանվել է 9 հիմնախնդիր, արձանագրվել են թիրախները, սահմանվել ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները, նկարագրվել հիմնախնդիրների լուծման ռեսուրսները.

<u>Հիմնախնդիր 1</u> Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Ապահովել հիմնական ուսումնական առարկաներին համապատասխան կրթական պլանների և ծրագրերի մշակումը՝ ըստ պետական չափորոշիչների: Հաշվի առնել ինստիտուտներում, Քոլեջի բաժիններում և կրթական այլ կառույցներում մասնագետների պատրաստման առանձնահատկությունները և ուղղությունները, ինչպես նաև նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերը:
- Իրականացնել Քոլեջի շրջանավարտներից և կրթական ծրագրերից հիմնական գործատու կազմակերպությունների բավարարվածության աստիճանի վերաբերյալ համալիր հետազոտություն և վերլուծություն՝ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու կարողությունների բարձրացման երաշխավորությունների մշակման և կատարելագործման նպատակով:

<u>Հիմնախնդիր 2</u> Կատարելագործել և հզորացնել ներքին որակի ապահովման համակարգը՝ ձգտելով դեպի առաջավոր չափանիշներ:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար, այն է. կատարելագործել հինը և ստեղծել նոր ներքին չափանիշներ, կանոնակարգեր ու ընթացակարգեր՝

1. ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային ապահովվածության գնահատման, ուսումնական ծրագրերի մշակման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար,
2. ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար՝ վերանայման և բողոքարկման մեխանիզմների ներառմամբ, դրանց հրապարակայնության ու հետևողական կիրառման ապահովմամբ:

- Ստեղծել և հրապարակել մեխանիզմներ և չափանիշներ մանկավարժա-դասախոսական անձնակազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների պարբերական գնահատման համար:
- Ապահովել որակի ներքին գնահատման չափանիշներին և ինքնագնահատման գործընթացին վերաբերող վերլուծական հաշվետվության հրապարակայնությունն ու թափանցիկությունը Քոլեջի ներքին և արտաքին շահառուների համար, ինչպես նաև սովորողների մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում:
- Պարբերաբար նախաձեռնել և իրականացնել Քոլեջի կրթական գործունեության ինքնագնահատման գործընթաց՝ համապատասխան հաշվետվություն, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար:

Հիմնախնդիր 3 Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման չափանիշներին համապատասխան:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Շարունակել բարձրորակ մանկավարժ դասախոսների ներգրավումը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:
- Շարունակել և զարգացնել դասախոսների պարբերական վերապատրաստումները՝ կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելու և դրանք Քոլեջի ուսումնական գործընթացում ներդնելու, էլեկտրոնային ուսուցման դասընթացներ և կրթական բարեփոխումներ իրականացելու ուղղությամբ:
- Ստեղծել դասախոսների համար համապատասխան պայմաններ ու խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող զարգացման ծրագրերին:
- Խրախուսել դասախոսների ինքնակրթությունը:
- Մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով ներդնել մանկավարժական-դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմ՝ ըստ գործունեության արդյունքների և աշխատանքի արդյունավետության:

- Բարձրացնել Քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

<u>Հիմնախնդիր 4</u> Շարունակել ձևավորել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Ապահովել ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կատարելագործման միջոցով:
- Մշտապես բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել Քոլեջի ուսումնական լաբորատոր բազան:
- Ստեղծել պայմաններ էլեկտրոնային գրադարան ստեղծելու համար:
- Ներդնել ուսանողների գիտելիքների ստուգման համակարգչային թեստային համակարգ:
- Մշակել էլեկտրոնային ուսուցման ծրագրեր:

<u>Հիմնախնդիր 5</u> Տրամադրել բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների կրթական,

մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Մշակել ուսուցման տարբեր մոտեցումներից և մեթոդներից բավարարվածության գնահատման չափանիշներ և գնահատել ուսանողների բավարարվածությունը Քոլեջում ստացած իրենց կրթությունից:
- Զարգացնել սովորողների ամենամյա տարեվերջյան հարցումների գործընթացը:
- Կատարելագործել և առավել արդյունավետ դարձնել պրակտիկաները, ուսման երկրորդ տարվանից ընդլայնել հիմնական գործատու կազմակերպություններում ուսանողների՝ ուսուցմանը զուգահեռ պրակտիկ փորձառության հնարավորությունները:
- Զարգացնել ուսանողների տեղեկատվական-խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման օժանդակության ծառայությունները:
- Շարունակել Քոլեջի արտաքին կապերի համակողմանի զարգացման հզորացումը, էլ ավելի մեծացնել գործակցային կապերը աշխատաշուկայի՝հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:

<u>Հիմնախնդիր 6</u> Ժամանակակից չափանիշներին համապատասխան զարգացնել Քոլեջի տեղեկատվական բազան՝ ապահովելով տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Խորացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Քոլեջի ուսումնական գործընթացներում:
- Շարունակաբար բարելավել արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը Քոլեջի ուսանողների և մանկավարժական կազմի համար:

<u>Հիմնախնդիր 7</u> Օգտագործելով օրենսդրությամբ և կանոնադրության ընձեռնված հնարավորությունները՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն լրացուցիչ արտաբյուջետային միջոցներ ներգրավելու նպատակով: Դառնալ ավելի նախաձեռնող Քոլեջի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում: Ներդաշնակեցնել ֆինանսական պլանավորումը Քոլեջի ռազմավարական նպատակներին և խնդիրներին:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Իրականացնել կարճաժամկետ դասընթացներ՝ հաստատված մասնագիտություններին ավելացնելով նորերը:
- Մասնակցել տարբեր կրթական ծրագրերով հայտարարվող պարբերական մրցույթների:
- Իրականացնել ուսուցում մեծահասակների համար:
- Իրականացնել գործատուների, աշխատակիցների գիտելիքների գնահատում և թեսթավորում:
- Մշակութայինից մինչև սննդի սպասարկման մասնագիտություններ, իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:
- Փորձել ձևավորել հաստատության ներսում գործող առանձին ձեռնարկատիրական հաստատություն՝ համապատասխան օրենսդրական փոփոխությունների կյանքի կոչումից հետո:
- Գոյացած միջոցները կանոնադրական նպատակներով օգտագործելու նկատառումով, դրանք ուղղել նյութատեխնիկական բազայի թարմացմանը, քոլեջի աշխատակիցների աշխատավարձերի վերանայմանը, ներքոլեջային կրթաթոշակների սահմանմանը և այլն:
- Նախաձեռնել և իրականացնել ծրագրեր և միջոցառումներ՝ առկա և նոր բարերարների, դոնորների և այլ աջակցողների նվիրատվությունները, շնորհները և ներդրումային ծրագրերը լուսաբանելու և հանրությանը

ներկայացնելու համար: Նրանց հետ զարգացնել և պահպանել երկարաժամկետ գործակցային հարաբերություններ:

<u>Հիմնախնդիր 8</u> Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Պահպանել հստակեցված լիազորությունների և պատասխանատվության բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև:
- Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել և խորացնել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում, բարձրացնել կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը:
- Ապահովել կառուցողական համագործակցության զարգացումը Քոլեջի կառավարման, ուսանողական և այլ խորհուրդների միջև:

<u>Հիմնախնդիր9</u> Գործնական քայլեր ձեռնարկել կրթության դուալ համակարգի ներդրման համար թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման ճանապարհով

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Որպես տարածաշրջանային բազմագործառութային քոլեջ ներգրավվել (որպես փորձարարական ծրագիր) 1-2 մասնագիտությամբ դուալ կրթական ծրագրեր իրականացնող քոլեջների ցանկում:
- Լավագույնս օգտագործել առկա սոցիալական գործընկերության կայացած համակարգը ծրագրին արդյունավետ մեկնարկ և զարգացում ապահովելու նպատակով:
- Գտնել և ձևավորել համագործակցության նոր հարթակներ՝ շեշտը դնելով քոլեջ-գործատու գործընկերային հարաբերությունների վրա:

Գլուխ 5
ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ.

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի կարողությունների զարգացմանը առավելագույնս նպաստեց ԵՄ- ի կողմից իրականացված վերանորոգումն ու նյութատեխնիկական բազայի հզորացմանն ուղղված աջակցության ծրագիրը: Արդեն իսկ կապիտալ վերանորոգված հաստատությունում հատկացված ժամանակակից գույքի և սարքավորումների շնորհիվ ձևավորվել են հագեցված առարկայական և համակարգչային կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, գործում է ջեռուցման համակարգը, ներդրվել են կարողություններին միտված ուսուցում ապահովող պետական կրթական չափորոշիչներ: Ձևավորվել է ուսանողակենտրոն կրթական հաստատություն, որտեղ որակյալ կրթություն ստանալուց զատ ուսանողները մասնակից են լինում մարզա- մշակութային միջոցառումների՝ օգտվելով քոլեջի սպորտային և մարմնամարզական դահլիճներից, հանդիսությունի դահլիճից, կինոդիտման և ժամանցի սրահներից:

Նպատակ ունենալով դառնալ բազմագործառութային տարածաշրջանային կենտրոն՝ երկարաժամկետ ծրագրով նախատեսվում է կարողությունների զարգացում նաև շահույթ հետապնդող գործառույթների իրականացումից: Ձևավորված ֆինանսական միջոցները միտված են լինելու առկա կարողությունները պահպանելուն և նորացնելուն՝ ժամանակի պահանջներին համընթաց: Այս ամենն իր անմիջական ազդեցությունն է թողնում ուսանող

շահառուների մասնագիտական կարողությունների ու գիտելիքների որակի աճի տեմպերի վրա:

Առկա կարողությունները բավարար են 500 ուսանողի կրթությունը անհրաժեշտ որակով իրականացնելու համար: Այդ թվում՝

ա/ լսարանային պայմանները բավարար են 800-1000 ուսանողի կրթությունը երկհերթ կազմակերպելու համար,

բ/ դասախոսական կազմը և վերջինիս որակը բավարար է 500 ուսանողների կրթության կազմակերպման համար,

գ/ նյութատեխնիկական բազան բավարար է 800-1000 ուսանողի կրթելու համար:

Առկա ռեսուրսները ընդհանուր առմամբ բավարարում են 2023-2028 թթ.-ին սովորողների կրթության ապահովման համար:

Մասնագետների վերապատրատումները իրականացվում են պետական ծրագրերով և ծախսեր չեն նախատեսում:

<u>Նախատեսվում է՝</u>

- Զարգացնել էլեկտրոնային գրադարանը, գործող ներքոլեջային էլեկտրոնային հարթակում ներբեռնելով նորացված ուսումնառության նյութեր (2023-2028թ),
- Հզորացնել քոլեջի ներքին որակի ապահովման ենթակառուցվածքը (2023-2025թ),
- Հզորացնել քոլեջի Կարիերայի կենտրոնը (2023-2025)
- Մասնակցել հավատարմագրման գործընթացին (2023-2028թ)
- Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ մասնագիտությունների պետական կրթական նորացվող չափորոշիչներին համապատասխան (2023-2028թ):

-Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար (2023-2028թ):

-Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Քոլեջի ուսումնական գործընթացներում(2023-2028թ):

-Շարունակել բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր, ինչպես նաև բարձրացնել Քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը(2023-2028թ):

- Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար (2023-2028թ):

- Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել Քոլեջի ուսումնական լաբորատոր բազան(2023-2028թ):

- Տրամադրել բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների կրթական, մասնագիտական, մշակութային և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը՝ առավելագույնի հասցնելով ուսումնառությունը հաջողությամբ ավարտելու նրանց հնարավորությունները (2023-2028թ):

- Ժամանակակից չափանիշներին համապատասխան վերափոխել և զարգացնել Քոլեջի տեղեկատվական բազան՝ ապահովելով տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը (2023-2028թ):

- Դառնալ ավելի նախաձեռնող Քոլեջի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում:

Ներդաշնակեցնել ֆինանսական պլանավորումը Քոլեջի ռազմավարական նպատակներին և խնդիրներին (2023-2028թ):

- Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ավելի առարկայական դարձնել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարմանը, նպաստել հաստատությունում գործող ուսանողական խորհրդի հզորացմանը(2023-2028թ):

- Հզորացնել Քոլեջի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, մեծացնել գործակցային կապերը աշխատաշուկայի՝ հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ(2023-2028թ):

7

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ.

Ծրագրի պատասխանատուներ են հանդիսանում ներքոնշյալ ստորաբաժանումներն ու պատասխանատու աշխատակիցները:

Մանկավարժական խորհուրդ
Տնօրեն
Փոխտնօրեն ուսումնական աշխատանքների գծով
Փոխտնօրեն կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով
Փոխտնօրեն վարչատնտեսական աշխատանքների գծով
Գլխավոր հաշվապահ
Կադրերի բաժնի վարիչ
Ներքին որակի ապահովման ենթակառուցվածք և պատասխանատու
Ուսումնական մասի վարիչ
Կարիերայի ուղղորդման պատասխանատու
Ամբիոնների վարիչներ.
- Արհեստագործական մասնագիտությունների ամբիոն
- Արվեստի մասնագիտությունների ամբիոն
- Տնտեսագիտական մասնագիտությունների ամբիոն
- Հումանիտար առարկաների ամբիոն
- Տեխնիկական առարկաների ամբիոն
Բաժնի վարիչ հանրակրթական ծրագրով
Պրակտիկայի վարիչ
Ամբիոնների լաբորանտներ
Յուրաքանչյուր ստորաբաժանում և պատասխանատու անձ ուսումնական տարվա ավարտին իրենց համապատասխան հաշվետվությունները կներկայացնեն մշտադիտարկման նպատակով ստեղծվելիք աշխատանքային խմբին:

Գլուխ 8

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.

	Անվանումը	Քանակը	Մակերես
1.	Ուսումնական մասնաշենք N1 այդ թվում արտադրական արհեստանոցներ	1	4762.0
3	Ուսումնական մասնաշենք N2՝ այդ թվում հանդիսությունների դահլիճ	1	859.0
4	Ավտոտնակ	1	150.3
6	Կանաչապատ տարածք		10400.0
7	Ասֆալտապատ տարածք		3900.0

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ֆինանսական կանխատեսումների հիմքում ընկած են ոչ միայն ենթադրություններ, այլ հաստատության գործունեության վերջին տարիների վերլուծությունը: 2008 թվականին ունենալով 240 սովորող՝ 2014-2015 ուստարում ուսանողների թիվն անցավ 500-ից:

Պետական պատվերի տեղերի ավելացման արդյունքում մեծացել է պետական ֆինանսավորումը, իսկ արտաբյուջետային միջոցների ձևավորման հիմնական մասը կազմում են մուտքերը կարճաժամկետ դասընթացներից և ուսման վարձերից:

Քոլեջը, որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն, շահույթի նպատակ չի հետապնդում: Երկարաժամկետ պլանավորմամբ նախատեսվում է

լրացուցիչ ծառայությունների մատուցում, որը կնպաստի շահույթի ձևավորմանը: Ակնկալվող շահույթը կօգտագործվի բացառապես կանոնադրական նպատակների իրականացման համար, ինչը հնարավորություն կտա բարելավել ծառայություններ մատուցելու առկա պայմանները, իրականացնել աշխատակազմի խրախուսում, վերապատրաստում (անձնակազմի խրախուսումը արվում է նաև հիմա՝ ուսման վարձերի ու մատուցվող կրթական այլ ծառայություններից ձևավորվող ֆինանսական հոսքերի հաշվին): Առաջացած շահույթը հնարավորություն կտա ձեռք բերել ուսումնական և մասնագիտական գրականություն, կօգտագործվի քոլեջի նյութատեխնիկական բազան հարստացնելու, եղածը արդյունավետ շահագործելու համար:

Քոլեջն իր կանոնադրության համաձայն կարող է իրականացնել հետևյալ գործառույթները

ա/ Միջին մասնագիտական, նախնական մասնագիտական(արհեստագործական) կրթության, հանրակրթության, լրացուցիչ կրթության կազմակերպում.

բ/ Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.

գ/ Նախապատրաստական դասընթացների կազմակերպում.

դ/ Մասնագիտական ուսուցման դասընթացի կազմակերպում.

ե/ Կադրերի վերապատրաստում, վերաորակավորում և որակավորման բարձրացում.

զ/ Գիտահետազոտական աշխատանքների իրականացում.

է/ Ուսանողների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ուսումնարտադրական գործունեություն և սպասարկման ծառայությունների իրականացում.

ը/ Հրատարակչական գործունեության իրականացում.

թ/ Սովորողների հանրային սննդի կազմակերպում.

ժա/ Սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում.

ժբ/ Մշակութային գործունեության իրականացում:

Քոլեջում իրականացվելիք ներդրումների արդյունքում ընդլայնվելու են քոլեջի հնարավորությունները, ներգրավվելու են նոր շահառուներ, մատուցվելու են նոր ծառայություններ:

Միջնաժամկետ նպատակներից գերական մնում է նախկինում մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը է, դրանց ընդլայնումը և այդ նպատակով համապատասխան կարողությունների ապահովումը:

Որպես երկարաժամկետ ծրագրի գործողություններ (առաջիկա 5 տարվա կտրվածքով) նախատեսվում է՝

1. Ընդլայնել մասնագիտությունների ցանկը՝ հետևելով աշխատաշուկայի պահանջներին: 2023թվ-ին նախատեսվում է ներդնել «Լուսանկարչական գործ » մասնագիտությունը՝ նախնական արհեստագործական կրթական համակարգով՝ հիմնական կրթության հիմքով:

2. Ընդլայնել մատուցվող կարճաժամկետ դասընթացներին (ծառայություններին) մասնակից անհատների և կազմակերպությունների ցանցը:
3. Համագործակցել աշխատանքի տեղավորման գործակալությունների հետ՝ օգտագործելով քոլեջի թողարկած կադրերին և կարճաժամկետ դասընթացների մասնակիցներին համապատասխան վճարի դիմաց սոցգործընկերների ձեռնարկություններում աշխատանքի տեղավորելու հնարավորությունը
4. Կոմերցիոն թատերական ներկայացումների բեմադրում:
5. Արտադպրոցական դաստիարակության վճարովի տարբեր խմբերի ստեղծում:

Քոլեջը պարտքեր չունի ու առաջիկա 5 տարիներին իրականացվող ֆինանսական քաղաքականության շարունակության պարագայում չի ունենա՝ ֆորս - մաժորային իրավիճակների բացակայության պարագայում:

Ամրացված գույքը ամբողջությամբ օգտագործվում է քոլեջի ուսումնական կարիքների համար: Նկատի ունենալով, որ վարձակալությամբ տրամադրվող տարածքներն ու գույքը, որպես կանոն, փչացվում են վարձակալների կողմից կամ առաջանում են խնդիրներ վարձավճարների ժամանակին վճարման հետ կապված, վերջին տարիներին քոլեջի քաղաքականությունը եղել և մնում է որևէ տարածք կամ որևէ գույք վարձակալության չտրամադրելը: Այս քաղաքականությունը նախատեսվում է շարունակել նաև հետագայում:

9-10

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ռիսկերը

1. Տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներով և սահմանային իրավիճակով պայմանավորված տնտեսական, անվտանգային անկայունություն կամ ճգնաժամ

2. Մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության կտրուկ փոփոխություն

3. Դիմորդների սպասվելիք թվաքանակի նվազում՝ պայմանավորված անվճարունակության պատճառով կրթությունը չշարունակելով

-Այս առումով առավել ռիսկային է համարվում միջնակարգ կրթության հիմքով մասնագիտությունների դիմորդների քանակը՝ պայմանավորված.

ա) այդ կոնտինգենտի բուհ-ական կրթություն ստանալու նախապատվությամբ

բ) դպրոցն ավարտելուց հետո անմիջապես աշխատաշուկա մտնելու ցանկությամբ

4. Ոչ ֆորմալ կրթության վճարովի ծառայությունների իրականացման բացակայություն, այդ թվում պետական և մասնավոր կազմակերպությունների պատվերով իրականացվող ծրագրերը:

5. Բյուջետային ֆինանսավորման աղբյուրներից նախատեսվող միջոցների ստացման հետ կապված խնդիրներ՝ պայմանավորված տնտեսական իրավիճակով:

6. Նախահաշվով պլանավորած ֆինանսական մուտքերի՝ ուսման վարձերի թերի հավաքագրում՝ պայմանավորված սովորողների շարժով, շահառուների ընտանիքների անվճարունակությամբ, երկրից մեկնելու հանգամանքով

7. Կրթության որակի անկում կամ նվազում

8. Աշխատավարձի ցածր լինելու հանգամանքով կամ արտագաղթով պայմանավորված կադրերի արտահոսք

9. Գնաճ՝ այդ թվում էներգակիրների

10. Դրամի արժեզրկում

11. Արտագաղթ

Նշված ռիսկերը կարող են հանգեցնել

ա) խմբերի չհամալրման

բ) պահպանման ծախսերի կրճատման

գ) աշխատավարձերի նվազեցման

դ) աշխատակիցների թվաքանակի կրճատման

Ռիսկերի նվազեցման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը.

- ✓ Վերանորոգված մասնաշենքերի պահպանում և արդյունավետ շահագործում
- ✓ Նյութատեխնիկական միջոցների շարունակական ձեռքբերում, պահպանում և արդյունավետ շահագործում
- ✓ Գույքային թարմացվող ռեսուրսներ

- ✓ Կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը միտված իրականացվող համալիր քաղաքականությունը
- ✓ Աշխատավարձային ֆոնդի մեծացում
- ✓ Վարձավճարների աճի հնարավորինս բացառում
- ✓ Բարձրակարգ մանկավարժադասախոսական անձնակազմ
- ✓ Մանկավարժադասախոսական անձնակազմի որակների ընդլայնում
- ✓ Միջանձնային առողջ հարաբերություններ
- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական ցանցերի հնարավորությունների օգտագործում
- ✓ Սոցգործընկերության խորացում
- ✓ Ռեսուրսների հասանելիություն
- ✓ Տեղեկատվության վերլուծություն և կառավարում
- ✓ Արդյունավետ PR
- ✓ Հաստատության բարի համբավ

Գլուխ 11
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ:

Սույն ծրագրի մշտադիտարկմանը, վերահսկողությանը, իրականացման արդյունավետության գնահատմանն են ուղղված լինելու և որպես փորձարկված գործիք են հանդիսանալու քոլեջի կանոնադրությունը և գործող մի շարք կանոնակարգերը, որոնք ներկայացվում են ստորև.

- ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական ներքին կարգապահական կանոնները կանոնակարգում են աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր և ուղղված են աշխատանքի բարձր արդյունավետության ապահովմանը, ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարմանը, աշխատակազմի աշխատակիցների աշխատանքային և կատարողական կարգապահության ամրապնդմանը:

- ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

- ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳԻՐ

- ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

- ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ Կ Ա Ր Գ

Քոլեջի մանկավարժական խորհուրդը տնօրենի նախագահությամբ գործող մարմին է, որը լուծում է միջին մասնագիտական և նախնական /արհեստագործական/ ուսումնական հաստատության զարգացման ծրագրերի և սովորողների հետ կապված հիմնահարցերը:

-ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի Ուսանողական խորհուրդը Քոլեջի ուսանողության ներկայացուցչական, ինքնավարության, ինքնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող ներկայացուցչական ընտրովի մարմինն է:

ՈՒԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն է:

ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է սովորողների շահերը, նպաստում նրանց կրթական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

-ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ, ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՈԴՈՒԼՆԵՐԻ, ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՄԱՆ

Սույն կանոնակարգը կարգավորում է սովորողի գիտելիքների ընթացիկ ստուգման, ընթացիկ և կիսամյակային (տարեկան) քննությունների և տվյալ ժամանակահատվածում սովորողի կատարած աշխատանքի գնահատման, հմտությունների ձեռքբերման, գործնական խնդիրների լուծման մեջ ստացած գիտելիքների կիրառման կարողության, ինչպես նաև քննությունների արդյունքների բողոքարկման և քննությունների վերահանձնման գործընթացը:

-ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ, ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

-ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ՍԿՍՆԱԿ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

Սույն կանոնակարգով իրականացվում է մենթորություն սկսնակ դասախոսին աջակցելու, դասավանդման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու և ուսումնառողներին անհրաժեշտ գիտելիքներով ապահովելու նպատակով, որն էլ նպաստում է մասնագիտական առաջընթացին, փոխըմբռնման հաստատմանը այս գործընթացի շրջանակներում:

Գործընթացի նպատակներն են՝

- Ներգրավել սկսնակ դասախոսներին Քոլեջի կրթական, մշակութային, առօրյա կյանքին
- Աջակցել սկսնակ դասախոսներին հաղթահարել դժվարությունները դասավանդման գործընթացում
- Ձեռքբերել փորձառություն, մանկավարժական հմտություններ, մոտեցումներ:

-ԿԱՐԳ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ, ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

Քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կարգը սահմանում է սովորողների կողմից Քոլեջի պրոֆեսորադասախոսական/ մանկավարժական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

-ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՄԲԻՈՆԻ ԿԱՐԳ

Սույն Կանոնակարգը Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլոջի կանոնադրության հիմնադրույթներին համապատասխան սահմանում է Քոլեջի ամբիոնների կառուցվածքը, գործառույթները, կառավարումը:

-ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Սույն ընթացակարգը սահմանում է Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջի ուսումնական ծրագրերի և թեմատիկ պլանների մշակման, վերանայման և հաստատման գործընթացը:

-ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆN1 ՔՈԼԵՋԻ ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ

Աշխատակարգը սահմանում է Երևանի տարածաշրջանայինN1 քոլեջի Ներքին որակիապահովման ենթակառուցվածքի աշխատանքային գործունեության կարգը, գործառույթները, նպատակները, խնդիրները:
Ենթակառուցվածքի հիմնական նպատակը Քոլեջի ներքին որակի վերահսկումն ու դրա մոնիթորինգի իրականացումն ու ապահովումն է:

-ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՆԵՐՔՈԼԵՋԱՅԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

-ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԳԵԼԻ ԵՎ ԱՆՀԱՐԳԵԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ

Առաջնորդվելով վերոնշյալով՝ ծրագրի կենսագործման մոնիթորինգի (մշտադիտարկման) իրականացման համար քոլեջի բոլոր ստորաբաժանումները պարբերաբար կկազմեն գործողությունների տարեկան պլանների կատարման հաշվետվություններ:

Հաստատությունում կձևավորվի **ծրագրի մշտադիտարկման խումբ**՝ բաղկացած 3-5 հոգուց: Ստորաբաժանումների հաշվետվությունները կընդունվեն և կուսումնասիրվեն այդ խմբի կողմից, իսկ տնօրինությանը կներկայացվեն մշտադիտարկման ամփոփ արդյունքները: Գործողությունների տարեկան պլանի կատարման մասին ամփոփ հաշվետվությունը կներկայացվի Կառավարման խորհրդին, կարվեն հետևություններ,կկայացվեն որոշումներ:

Պարույր Սանթրոսյան